Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունիսի 17 -ի N 335 - Ա
որոշման

«ԱՆՉԱՓԱՀԱՍ ԼՈՒՍԻՆԵ ՎԱՀՐԱՄԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ, Լոռու մարզի Սպիտակ քաղաքի, Ուզբեկական Կ-1 թաղամաս, թիվ 10 շենք, թիվ 1 բնակելի տան առաջին հարկի վերանորոգման աշխատանքների իրականացում, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի ծրագրի շահառու ընտանիքին բնակվել իրենց սեփական տանը՝ խնայելով, ներկայումս ծախսվող, ընտանիքի եկամտի մեծ մասը հանդիսացող, տան վարձի գումարը: Ծրագրի շահառու՝ Լուսինե Թումանյանի հայրը մահացել է 2005 թվականին և Լուսինեն մնացել է մոր՝ Ադրինե Երջանիկի Օհանյանի խնամքին: Սակայն մայրն էլ 3-րդ կարգի հաշմանդամ է, ունի առողջական խնդիրներ: Ընտանիքի միակ եկամուտը մոր աշխատավարձն է, որի մեծ մասն էլ ստիպված են վճարել որպես վարձակալած բնակարանի վարձավճար, քանի որ իրենց տունը ներկայումս բնակվելու համար պիտանի չէ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Նիդեռլանդների «Մենսենքինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե. Նիդեռլանդեր, Spoorlaan 1a, 8071 BN Nunspeet)
4.	Ծրագիրը կատարողը	«Աստղիկ» բարեգործական հիմնադրամ (իրավաբանական հասցե ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 24 շենք, բնակարան 30, ՀՎՀՀ՝ 00472741)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Լոռու մարզ, քաղաք Սպիտակ, սոցիալական աջակցության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	2,947,812 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի բնակիչ, անչափահաս՝ Լուսինե Վահրամի Թումանյան, որի անունից հանդես է գալիս մայրը՝ Ադրինե Երջանիկի Օհանյանը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Լոռու մարզի Սպիտակ քաղաքի, Ուզբեկական Կ-1 թաղամաս, թիվ 10 շենք, թիվ 1 բնակելի տան առաջին հարկի վերանորոգում՝ սենյակների, խոհանոցի, սանհանգույցի ներքին հարդարման աշխատանքների իրականացում, ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների մոնտաժում, 2,947,812 դրամ ընդհանուր արժեքով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Աստղիկ» բարեգործական հիմնադրամի և «Իրտիգ» ՍՊԸ միջև կնքվել է շինարարական կապալի մասին պայմանագիր, որով նախատեսվում է շահառուի բնակելի տանը, կապալառուի նյութերով և միջոցներով իրականացնել 2,947,812 ՀՀ դրամի վերանորոգման աշխատանքներ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան, Լոռու մարզի Սպիտակ քաղաքի քաղաքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերաբերյալ սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում «Մենսենքիդերեն» բարեգործական հիմնադրամին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվի տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ